

## ՀՅԴ ԳՊՄ Թորոնթոյի «Քրիստափոր Միքայէլեան» մասնաճիւղի սեմինար

Ուրբաթ 20 Նոյեմբերի երեկոյեան, Թորոնթոյի Հայ կեդրոնը եռուկերի մէջ էր: ՀՅԴ Գա-  
նատայի Պատանեկան Միութեան Թորոնթոյի «Քրիստափոր Միքայէլեան» մասնաճիւղի  
երեք պատանիները խանդավառ էին, որովհետեւ ամբողջ շաբաթավերջը, Հայ կեդրոնէն  
ներս պիտի մասնակցէին սեմինարի:

Սեմինարը սկսաւ ժամը 8:30-ին Մշակ Բանուոր քայլերգով: Մասնաճիւղի երեք վարիչը՝  
ընկ. Մասիսը, պատանիներուն բարի գալուստ մաղթեց, որմէ ետք, պատանիները հաւաք-  
ուեցան ԳԵՄ-ի ժողովասրահը, ուր մտերմիկ եւ տաքուկ մթնոլորտի մէջ ընթացին եւ շար-  
ժապատկեր դիտեցին: Ուշ ատեն անոնք գացին «քննախու» ու ամբողջ գիշերը զբաղեցան  
խօսելով, խնդալով, ու «պատժուելով»: Ուրախ, զուարթ, անոնք առանց գիշերը քննախու  
«արթնցան» եւ պատրաստուեցան իրենց առաջին դաստիարակչական դասախօսութեան,  
որ ներկայացուց ընկ. Խաչիկ Զարշաֆեանը: Դասախօսութենէն ետք, պատանիները ունե-  
ցան մարզական խաղեր, որմէ ետք ճաշեցին ու քիչ մը հանգիստ ըրին: Հանգիստի դադա-  
րէն ետք, ունեցանք ասուլիս-գրոյց, որուն նիւթն էր՝ «Հոգի՞ն թէ լեզուն»: Ասուլիսը վարողն  
էր ընկ. Հրայր Իզմիրեան: Մէկ ժամուան վրայ երկարող կարծիքներու փոխանակումէն ետք,  
պատանիները եկան այն եզրակացութեան, որ թէ՛ լեզուն եւ թէ՛ հոգին Նոյնքան կարեւոր են՝  
հայ պատանին իբրեւ հայ պահելու համար: Ուրախանալի եւ յուսադրիչ էր այն երեւոյթը,  
երբ քսանհինգ հայ պատանիներ անխտիր բոլորն ալ հայերէն լեզունով եւ մանաւանդ հայու  
ոգիով որոշեցին որ հայ մտալու համար միայն հայ զգալը չէ կարեւորը, այլ՝ հայերէն խօսիլ  
ալ Նոյնքան կարեւոր է:

Երեկոյեան կայացաւ նամակագրութեան դասընթացը մը, որուն դասատուն էր ԳԵՄ-  
ական ընկ. Յարութ Գասապեանը եւ այլ դասախօսութիւն մը՝ Հայաստան-Արցախ կապերու  
մասին դասախօս ունենալով ընկ. Քրիստափոր Յարութիւնեանը: Ընդհանուր առմամբ, օրը  
լեցուն էր խաղերով, դաստիարակչականներով, եւ ընկերային մտերմիկ ժամերով:

Գիշերը, ընթրիքէն ետք, տեղի ունեցաւ ընկերային խրախճանք որուն ընթացքին իւրա-  
քանչիւր պատանի, ձեռքը յեղափոխական երգերու երգարան մը եւ վարիչի օգնական ընկ.  
Սեպուհի առաջնորդութեամբ՝ երգեցին յեղափոխական եւ ազգագրական երգեր: Ուշ գիշե-  
րին անոնք յոգնած եւ ուժասպառ կը պատրաստուէին մեկնիլ իրենց անկողիները, ժամը  
երեքին արթննալու համար, երբ յանկարծ «անժանօթ» ծպտուած «յարձակողներ», որոնք  
մեր ԳԵՄ-ական ընկերներն էին, եկան եւ «գողցան» պատանիներու դրօշակները եւ «առե-  
լանգեցին» ընկ. Ռաֆֆին: Անփորձ պատանիները, անակնալի եկած էին եւ չէին գիտեր ի՞նչ  
ընեն, որպէսզի «ազատեն» իրենց ընկերը ու մանաւանդ վերադարձնեն իրենց դրօշակները:  
Ընկ. Վաչէի ռազմագիտական փորձառութեամբ, մեր պատանիները կրցան «առեւանգողնե-  
րուն» հետ համաձայնիլ եւ ազատել իրենց ընկերն ու դրօշակները՝ փոխան քսան ձախ ոտ-  
քի կօշիկներու: Պէտք էր անպայման կօշիկները ձախ ոտքի ըլլային:

Ուրեմն առաւօտեան ժամը 3:45-ին, հայ կեդրոնի շրջափակին մէջ, ըրինք փոխանա-  
կումը, մեր ընկ. Ռաֆֆին վերադարձաւ իր խումբին եւ դրօշները մեր պահակ պատանինե-  
րուն: Հոգ չէ թէ քսան հատ ձախ կօշիկ գոհեցինք, բայց կարեւորը վերադարձուցինք մեր ըն-  
կերը եւ դրօշակները եւ առաւօտեան ժամը 4:00-ին, ծափահարութիւններով ու «Արիւնօտ  
Դրօշ» երգելով վերադարձան իրենց տեղերը գոհունակ եւ ուրախ:

Կիրակի առաւօտեան, Նախաճաշի ատեն, շրջանիս կոմիտէի հերթապահ ընկ. Վաչէ  
Գըլըպոզեան այցելեց մեզի եւ փոխանցեց իր խօսքը, որմէ ետք սեմինարը փակեցինք «Մեր  
Հայրենիք» քայլերգով:

Պատանիները իրենց տունները վերադարձան ուրախ, որովհետեւ խոստացուեցաւ  
իրենց, որ ապագային նման սեմինարներ դարձեալ պիտի կազմա-կերպուին:

ԸՆԿՐ. ԹԱԼԻՆ